



ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՈՒՅՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈԹԵՍԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ	ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՈՒՅՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	POL 05	<i>Խմբագրություն 1</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 2/8</i>
		22.06.2026	30.06.2026	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՈՒՅՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	4
ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՈՒՅՑԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	4
ԳԼՈՒԽ 4. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԾՈՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՈՒՅՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	4
ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՈՒՅՑԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	5
ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՈՒՅՑԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ.....	6
ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ	7
ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	7
ԳԼՈՒԽ 9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	7

	ՇԱՀՈՒԹԱՔԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 05	<i>Խմբագրություն 1</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 3/8</i>
		22.06.2026	30.06.2026	

ՆՊԱՏԱԿԸ

«Շահութաքաժինների վճարման քաղաքականության» (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակն է սահմանել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) շահութաքաժինների վճարման սկզբունքները, վճարման պայմանները, գործընթացը, շահութաքաժինների վճարման սահմանափակումները և այլ անհրաժեշտ դրույթներ:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն քաղաքականությունը կիրառվում է Բանկի կառավարման մարմինների և շահագրգիռ այլ անձանց կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք	ՀՕ-68
ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. հաստատած «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատելու մասին» հրաման	1955-Ն
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրություն	CHT 01

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շահութաքաժին՝ Բանկի շահույթի մաս, որը Բանկի կողմից սահմանված կարգով վճարվում է տեղաբաշխված բաժնետոմսերի/բաժնեմասերի դիմաց և հանդիսանում է մասնակցի եկամուտը:

Տարեկան շահութաքաժին՝ մասնակցին բացառապես Բանկի տարեկան գործունեության արդյունքներով վճարվող շահութաքաժին:

Միջանկյալ շահութաքաժին՝ մասնակցին բացառապես Բանկի եռամսյակային կամ կիսամյակային գործունեության արդյունքներով վճարվող շահութաքաժին:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն քաղաքականությունը մշակվել է շահութաքաժինների չափի որոշման մեխանիզմում բաժնետերերի և բոլոր շահագրգիռ կողմերի համար առավելագույն թափանցիկություն ապահովելու համար և սահմանում է սկզբունքները, որոնցով առաջնորդվում է Բանկի Խորհուրդը՝ բաժնետերերի Ընդհանուր ժողովին առաջարկություններ պատրաստելիս՝ Բանկի շահույթի բաշխման մասին որոշում կայացնելու համար:

1.2. Սույն քաղաքականության նպատակն է լավագույնս հավասարակշռել բաժնետերերի և Բանկի շահերն ու հնարավորություն տալ Բանկին իրականացնել իր ռազմավարական նպատակները՝ մնալով մրցունակ և ֆինանսապես կայուն:

1.3. Սույն քաղաքականությունը հիմնված է բաժնետերերի իրավունքների խստիվ պահպանման, Բանկի և բաժնետերերի շահերի հավասարակշռության վրա և ուղղված է Բանկի բաժնետերերի եկամուտների ավելացմանը՝ ինչպես շահութաքաժինների վճարման, այնպես էլ Բանկի կապիտալիզացիայի բարձրացման միջոցով:

1.4. Շահութաքաժինների վճարման կարգի հիմնական դրույթներն ու սկզբունքները կարող են փոփոխվել՝ ելնելով տնտեսական իրավիճակների և (կամ) Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված նպատակների փոփոխություններից:

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ	POL 05		<i>Խմբագրություն 1</i>	
	<i>Հաստատման ամսաթիվ</i>		<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 4/8</i>
	22.06.2026		30.06.2026	

1.5. Սույն քաղաքականությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Բանկը ձգտում է ապահովել շահութաբերության այնպիսի մակարդակ, որը միաժամանակ կնպաստի՝

- ա. Բանկի բաժնետոմսերի ներդրումային գրավչության մրցունակությանը և
- բ. Բանկի ընթացիկ և ռազմավարական խնդիրների անհրաժեշտ ֆինանսավորմանը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Բանկը շահութաբաժինների վճարման իր քաղաքականությունն իրագործելիս հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- ա. **հավասար վերաբերմունք բաժնեդերձերի նկատմամբ.** շահութաբաժինների վճարման քաղաքականությունն ու ընթացակարգերն ապահովում են հավասար և արդար վերաբերմունք միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի/բաժնետերերի նկատմամբ,
- բ. **իրավաչափություն.** շահութաբաժինների վերաբերյալ որոշման ընդունումն ու դրանց վճարումն իրականացվում են՝ համաձայն ՀՀ օրենսդրության, Բանկի կանոնադրության, սույն քաղաքականության և Բանկի ներքին իրավական այլ ակտերի,
- գ. **թափանցիկություն.** շահութաբաժինների վճարման քաղաքականությունն ու ընթացակարգերը, վճարվելիք և վճարված շահութաբաժինների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում,
- դ. Բանկի կորպորատիվ կառավարման բարձր չափանիշներին համապատասխանության ապահովում,
- ե. բաժնետերերի կարճաժամկետ (եկամտի ստացում) և երկարաժամկետ (Բանկի զարգացման ապահովում) շահերի հավասարակշռում,
- զ. Բանկի ներդրումային գրավչության և կապիտալիզացիայի բարձրացման ապահովում:

3.2. Շահութաբաժինների գումարը հաշվարկվում է հաշվի առնելով Բանկի զուտ շահույթի չափը:

ԳԼՈՒԽ 4. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԾՈՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 4.1. Բանկի Կանոնադրությամբ նախատեսված են չորս տեսակի բաժնետոմսեր՝
- ա. սովորական,
 - բ. հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր,
 - գ. հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր,
 - դ. հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր:

4.2. Յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանվում է Բանկի Կանոնադրությամբ և այն ենթակա է վճարման ֆինանսական տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում:

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԼԱՄԵՆՏ	POL 05		<i>Խմբագրություն 1</i>	
	<i>Հաստատման ամսաթիվ</i>		<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 5/8</i>
	22.06.2026		30.06.2026	

4.3. Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինն՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, ընդ որում, ամբողջությամբ կամ մասամբ չվճարված շահութաբաժինն ենթակա չէ հետագայում վճարվելու պայմանով կուտակման:

4.4. Սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինն ենթակա է վճարման Բանկի զուտ շահույթից, իսկ արտոնյալ բաժնետոմսերի գծով՝ նաև զուտ շահույթի հաշվին ձևավորված հիմնադրամներից:

4.5. Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու, իսկ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է Կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

4.6. Սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

5.1. Բանկը կարող է հայտարարել և վճարել եռամսյակային, կիսամյակային (այսուհետ՝ միջանկյալ) և/կամ տարեկան շահութաբաժիններ:

5.2. Տարեկան կտրվածքով Բանկը կարող է հայտարարել և վճարել շահութաբաժիններ իր զուտ (կուտակված) շահույթի 0-ից 100 տոկոսի չափով:

5.3. Շահութաբաժինների հայտարարումը կատարվում է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (IFRS) հիման վրա կազմված և հաստատված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

5.4. Սույն քաղաքականության 6-րդ գլխում նշված սահմանափակումների բացակայության դեպքում, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման հիման վրա, Բանկը պարտավոր է ժամանակին և ամբողջությամբ վճարել հայտարարված շահութաբաժինները: Բանկը պատասխանատվություն է կրում բաժնետերերի առջև նշված պարտավորությունը չկատարելու համար՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

5.5. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի (այդ թվում՝ մեկ բաժնետոմսի հաշվարկով) և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ՝ սահմանելով նաև վճարման ժամկետը:

5.6. Շահութաբաժինների վճարումների թիրախային մակարդակը կազմում է Բանկի նախորդ տարվա զուտ շահույթի առնվազն 25 տոկոսը:

5.7. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

5.8. Եթե բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

5.9. Եթե բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

5.10. Տարեկան շահութաբաժինների վճարման և դրանց չափի հաստատման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

	ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 05	Խմբագրություն 1	
		Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	էջ 6/8
		22.06.2026	30.06.2026	

5.11. Միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունվում է Բանկի խորհրդի կողմից:

5.12. Բանկի Խորհուրդը սահմանում է միջանկյալ շահութաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և պայմանները: Ընդ որում՝ միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 (հիսուն) տոկոսը:

5.13. Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Բանկի խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր հետո:

5.14. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Բանկի Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

- միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,
- տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

5.15. Բանկը շահութաբաժինների վճարման մասին նախապես ծանուցում է Կենտրոնական բանկին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

ԳԼՈՒԽ 6. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

6.1. Շահութաբաժինների հաշվարկը և վճարումը կատարվում են միայն տեղաբաշխված ու ամբողջությամբ վճարված բաժնետոմսերի/բաժնեմասերի դիմաց:

6.2. Բանկն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե.

- 1) լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը,
- 2) Բանկը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,
- 3) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
- 4) Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կապակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,
- 5) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

6.3. Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել Բանկի կողմից շահութաբաժիններ բաշխելը, այդ թվում՝ արտոնյալ բաժնետերերին կամ Բանկի այլ բաժնետերերի այլ ձևով որևէ եկամուտներ (հատուցումներ) վճարելը, եթե՝

- 1) շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)՝
- 2) շահութաբաժինների բաշխման հետևանքով Բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)՝
- 3) Բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

 ՅՈՒՆԻԲԱՆԿ	ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 05	<i>Խմբագրություն 1</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 7/8</i>
		22.06.2026	30.06.2026	

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

7.1. Բանկն ապահովում է իր շահութաբաժինների քաղաքականության թափանցիկությունը՝ տեղադրելով համապատասխան տեղեկատվություն իր պաշտոնական կայքում՝ www.unibank.am հասցեով:

7.2. Բանկի կայքում հրապարակվող տեղեկատվությունը ներառում է սույն քաղաքականությունը, ինչպես նաև Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը շահութաբաժինների վճարման վերաբերյալ՝ ներառյալ չափը, ժամկետը, ձևը և շահութաբաժինների վճարման կարգը:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն քաղաքականությունը հաստատվում, փոփոխվում և լրացվում է Բանկի խորհրդի որոշմամբ:

8.2. Բանկի որևէ բաժնետիրոջը չի տրամադրում որևէ արտոնություն՝ կապված հայտարարագրված և հաշվեգրված շահութաբաժինների վճարման ժամկետների հետ:

8.3. Վճարված շահութաբաժինների հարկումն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն քաղաքականության սեփականատեր է հանդիսանում Ֆինանսական տնօրինությունը:

9.2. Սույն քաղաքականությունն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 30-ից:

 ՅՈՒՆԻԲԱՆԿ	ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 05	<i>Խմբագրություն 1</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 8/8</i>
		22.06.2026	30.06.2026	

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ	ՀԱՍՏԱՏԵՑ
Վարչության նախագահ	Խորհրդի նախագահ
	22.06.2026թ.
Մեսրոպ Հակոբյան	Գագիկ Զաքարյան

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ
Ֆինանսական տնօրեն-Գլխավոր հաշվապահ
Գոհար Գրիգորյան